Հիմնավորում

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը համայնքի ծրագրային այն փաստաթուղթն է, որը սահմանում է տվյալ տարվա ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց մասնակցությամբ համայնքում իրականացվող բոլոր ծրագրերը և միջոցառումները:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը մշակվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա՝ տվյալ տարվա ընթացքում համայնքի տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական և այլ ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներն առավել նպատակային և արդյունքահենք կազմակերպելու համար:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանում ընդգրկվում են համայնքում իրականացվող համայնքի բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող, ինչպես նաև ֆինանսավորում չպահանջող բոլոր ծրագրերը, այդ թվում՝ համայնքի ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և զարգացման, համայնքային ծառայությունների մատուցման, հիմնական միջոցների կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներդրումային, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի աջակցությամբ և այլ ծրագրեր:

Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման
և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ՝ Ք. Ներսիսյան

13.12.2024թ.

Տեղեկանք

Ավագանու համապատասխան որոշումն ընդունելուց հետո համայնքի 2025 թվականի ճշտված բյուջեի ծախսային և եկամտային մասերում կկատարվեն համապատասխան պլանավորումները:

Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման
և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ՝ Ք. Ներսիսյան

13.12.2024թ.